



Փետրվարի 25, 2021թ.

Կարծիք

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունն ընդդեմ «Շամանակ» օրաթերթի դատական գործի կապակցությամբ

Գործի հանգամանքները

2020թ. դեկտեմբերի 10-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է թիվ ԵԴ/0280/02/19 քաղաքացական գործով վճիռ ըստ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության հայցի՝ ընդդեմ «Շամանակ» օրաթերթի: Դատարանը բավարարել է պետական մարմնի հայցը և որոշել, որ լրատվամիջոցը արատավորել է քրեակատարողական ծառայության բարի համբավը՝ օրաթերթի 2018թ. դեկտեմբերի 12-ի «*Բարձիթողի վիճակ՝ ՔԿՀ-ներում. աշխատակիցները փող են աշխատում բանտախցի դռները բաց պահելու համար*» հոդվածում գրպարտող հայտարարություններ տարածելով և պարտավորեցնել է օրաթերթին հրապարակել հերքում հետևյալ բովանդակությամբ. «*«Շամանակ» օրաթերթի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Բարձիթողի վիճակ՝ ՔԿՀ-ներում. աշխատակիցները փող են աշխատում բանտախցի դռները բաց պահելու համար» վերտառությամբ հրապարակումը եղել է ապատեղեկատվություն և չի համապատասխանում իրականությանը: «Շամանակ» օրաթերթն անկեղծորեն զղջում է Քրեակատարողական ծառայության գործունեությունը ոչ հավաստի տվյալներով արատավորելու և անձնակազմին գրպարտելու համար՝ հայցելով վերջիններիս ներողամտությունը»:*

Վճիռը չի բողոքարկվել և մտել է ուժի մեջ:

Վերլուծություն և եզրակացություն

Անկախ վեճի առարկա հոդվածի բովանդակությունից, Խորհուրդը մտահոգված է, որ սույն գործով դատական հայցը ներկայացվել է պետական մարմնի կողմից:

Պետական մարմինները պետք է հրաժարվեն վիրավորանքի և զրպարտության հիմքերով լրատվամիջոցների ու լրագրողների դեմ դատական հայցեր ներկայացնելուց: Նման դատավարություններն ընդհանուր առմամբ բացասաբար են ազդում տեղեկություններ ու գաղափարներ տարածելու լրատվամիջոցների ազատության վրա, որն էլ վնաս է հասցնում տեղեկություններ ստանալու հանրային շահին:

Ժողովրդավարական հասարակությունում կարևոր է, որ քաղաքացիները կարողանան անկաշկանդ քննադատել պետական և հանրային մարմիններին, իսկ վերջիններս պետք է բաց լինեն ցանկացած քննադատության առջև, դրսևորեն հանդուրժողականություն: Այս խնդրին անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանը ՄԴՈ-997¹ որոշմամբ՝ սահմանելով, որ *անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, և «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ*²

Սահմանադրական դատարանի այս իրավական դիրքորոշումը աներկբա հիմք է, որ պետական մարմինները չհայցեն իրավական պաշտպանություն վիրավորանքից ու զրպարտությունից: Թեև այս սկզբունքը չի ամրագրվել օրենքում, պետք է հիշել, որ Սահմանադրական դատարանի որոշումները օրենքից բարձր իրավական ուժ ունեն և դրանք պարտադիր են կատարման: Ի վերջո, պետական մարմինները չպետք է հանրային ռեսուրսներն օգտագործելով՝ սահմանափակեն լրատվամիջոցների քննադատելու ազատությունը: Քանի որ պետական մարմինները տիրապետում են մեծ ռեսուրսների, որոնք կարող են օգտագործել քննադատությունից պաշտպանվելու համար, այդ թվում՝ ոչ իրավական գործընթացներով, այդ հանգամանքը քաղաքացիներին անպաշտպան է դարձնում պետական մարմինների առաջ:

Եվրոպայի խորհրդի երկրներում ձևավորվել է կոնսենսուս, որ պետական մարմինները պետք է ձեռնպահ մնան վիրավորանքի և զրպարտության գործերով դատական հայցեր ներկայացնելուց: Հայաստանի Հանրապետությունում նույնպես ձևավորվել է նման նման մոտեցում, և վերջին տասը տարվա ընթացքում պետական մարմինները խիստ հազվադեպ են ներկայացրել այդպիսի դատական հայցեր: Եղել են նաև դեպքեր, երբ ներկայացված հայցերը հետ են վերցվել, և դատական վարույթները կարճվել են: Խորհուրդը լիահույս է, որ սույն դատական գործը չի հանգեցնի պետական մարմինների կողմից լրատվամիջոցների դեմ դատական հայցեր ներկայացնելու պրակտիկայի ձևավորմանը:

¹ ՄԴՈ-977 որոշում, կայացվել է 2011 թվականի նոյեմբերի 15-ին: Որոշման տեքստը հասանելի է հետևյալ [ղղումով](#):

² Տե՛ս որոշման տեքստում կետ 11, պարբ. 3:

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան - «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Օլգա Սաֆարյան - Փաստաբան

Դավիթ Սանդուխյան - Փաստաբան